ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2019թ. N ----Ն

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի
N 41-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի «Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2019 թվականի ծրագրի վերաբերյալ» N 41-Ն որոշմամբ հաստատված հավելվածի VI-րդ գլուխը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 78-93-րդ կետերով՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Հավելված
Երևանի քաղաքի ավագանու
,,____,, _____2019թ.
N _____-Ն որոշման

78	Աջափնյակ	01-001-348-033	բնակավայրերի	Բնակելի կառուցապատում	Ս.Սարգսյան փող հ.16	
79	Աջափնյակ	01-001-431-009	բնակավայրերի	հասարակական կառուցապատում	Սիլիկյան 6-րդ հատված հ.2	
80	Արաբկիր	01-003-112-051	բնակավայրերի	Խառը կառուցապատում	Արծրունու փողոց հ.78	
81	Արաբկիր	01-003-240-001	բնակավայրերի	Խառը կառուցապատում	Արաբկիր 23-րդ փող հ.22/1	
82	Արաբկիր	01-003-240-034	բնակավայրերի	Խառը կառուցապատում	Արաբկիր 23-րդ փող հ.22/1	
83	Արաբկիր	01-003-1062-001	բնակավայրերի	Խառը կառուցապատում	Արաբկիր 23-րդ փող հ.22/1	
84	Դավթաշեն	01-004-147-005	բնակավայրերի	Բնակելի կառուցապատում	Դավթաշեն 5-րդ թաղ հ.36	
85	Էրեբունի	01-005-351-009	բնակավայրերի	Խառը կառուցապատում	Նոր Արեշի 11-րդ փողոցի հ.148	
86	Կենտրոն	01-006-001-094	բնակավայրերի	Բնակելի կառուցապատում	Անտառային փող հ.142	
87	Կենտրոն	01-006-987-002	բնակավայրերի	Խառը կառուցապատում	Նորագյուղ թաղ. Հ.72/11	
88	Նուբարաշեն	01-010-107-014	բնակավայրերի	Բնակելի կառուցապատում	Նուբարաշենի 12-րդ փող. 6/1	
89	Շենգավիթ	01-011-043-007	բնակավայրերի	Խառը կառուցապատում	Մանանդյան փողոցի հ.20/4	
90	Շենգավիթ	01-011-387-001	բնակավայրերի	Խառը կառուցապատում	Արշակունյաց փող. 186/1	
91	Քանաքեռ Զեյթուն	01-012-133-068	բնակավայրերի	Հասարակական կառուցապատում	Պ. Սևակի փող հ.5	

92	Քանաքեռ Զեյթուն	01-012-328-039	բնակավայրերի	Բնակելի կառուցապատում	Կ.Ուլնեցու փող. հ.33/1	
93	Քանաքեռ Զեյթուն	01-012-1127-001	բնակավայրերի	Բնակելի կառուցապատում	Գոգոլի փող հ.113	

»

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք – Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 41-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի համաձայն՝ Երևան քաղաքի ավագանին որոշում է ընդունում Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման տարեկան ծրագրի վերաբերյալ, որում պետք է նշվեն նաև հողամասերի գտնվելու վայրը, ծածկագրերը, Երևանի գլխավոր հատակագծով սահմանված նպատակները:

Հիմք ընդունելով նշվածը՝ Երևան քաղաքի ավագանու մի շարք որոշումներով հաստատվել են համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի ցանկեր և Երևանի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի N 41-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 44-րդ կետով 2019 թվականին օտարման և (կամ) օգտագործման տրամադրման համար առաջարկվող գույքի կազմում է ներառվել Երևան քաղաքի ավագանու որոշումներով հաստատված Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2010-2018 թվականների ծրագրերում ընդգրկված, սակայն դեռևս չօտարված Երևան համայնքին սեփականության իրավունքով պատկանող գույքը և հողամասերը:

Ներկայումս ներկայացվում է համայնքային սեփականություն հանդիսացող թվով 27 հողամասերի վերաբերյալ ցանկ և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի պահանջներից ելնելով՝ առաջարկվում է Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի N41-Ն որոշման հավելվածի VI-րդ գլխի 2019 թվականի օտարման առաջարկվող հողամասերի ցանկը լրացնել 78-93 կետերով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 41-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի N41-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չկա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 41-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի N41-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում եկամուտների և ծախսերի էական փոփոխություններ չեն նախատեսվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ